

Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Ի Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ի Ք

* Բշ. 1 Մայիս.— Յիշատակ մեզից: Ամեն-
 Պատրիարք Ս. Հայրը մատուց օրուան հանդիսաւոր
 Ս. Պատարազը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ
 և բարոզեց Յարութեան ստուգութեան մասին ու
 ապա իր խօսքը ուղղելով ուխտաւորներուն, պղ-
 ճերթի խօսքեր ըրաւ անոնց և խոսեցաւ Երուսաղէմ
 քաղաքի բացառիկ նշանակութեան շուրջ: Ս. Պատար-
 ազէն ևաք. Ն. Ամենապատուութիւնը նախագահեց
 Մայր Տաճարին մէջ կատարուած մեծահանգէլ Ռա-
 փօրին, ԱմոչՆովանի ներքև և Ս. Խաչափայտի
 մասունքն ի ձեռնին, մինչ վարդապետներ ի ձեռն
 ունէին սրբոց մասունքներ: Ապա երգուեցաւ «Ճա-
 նապարհ» ուխտաւորներուն իրբև սղջերթ, որմէ
 ևաք Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ, Միա-
 բանութիւն, ուխտաւորութիւն բարձրացան Պատ-
 րիարքարանի լուսադարձուած մեծ դահլիճը՝ ուր
 Ամեն. Պատրիարք Ս. Հայրը օրհնուած նշխարներ
 բաժնեց բոլորին:

* Գշ. 2 Մայիս.— Գ. օր Ս. Զատիկի: Ս. Պա-
 տարազը ի Ս. Վիլիսի: Ժամարան էր Հոգւ. Տ.
 Ներսէս Վրդ. Բագուճեան: Ապա կատարուեցաւ հո-
 գեհանգստեան պաշտոն՝ խնդրամատոյց ուխտաւոր-
 աց ննջեցեալ հարազատներու հոգիներուն համար:

* Շր. 6 Մայիս.— Վիլիստումն Յովհաննու կա-
 րապետին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տա-
 ճարի Աւագ Խորանի աշակոյժը դանուայ Ս. Յովհ-
 աննայեան խորանին վրայ: Ժամարան էր Հոգւ. Տ.
 Արշէն Արդ. Այվազեան:

* Կիր. 17 Մայիս.— Նոր Կիրակի (Յիշատակ
 բիրաւոր անհատակացն մերոց յընթացս Համաշ-
 խարհային պատերազմին): Ըստ սովորութեան Մայր
 Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարազեց և բար-
 օղեց Լուսահան Հոգւ. Տ. Կիրեղ Վրդ. Գարեկեան:
 Պատարազէն ևաք, նախագահութեամբ Լուսարարա-
 պետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի, հոգե-
 հանգստեան հանդիսաւոր պաշտամունք կատարուե-
 ցաւ Ս. Աշխարհամարտի Հայ Նահատակներու հոգի-
 ներուն համար: Սոյն արարողութիւնը կրկնուեցաւ
 Տաճարի դասերը՝ Երանաշնորհ Տ. Կիրեղ Պարթ-
 չօր չիբժին վրայ և ապա, Թափօրական դնացբով,
 Զամ-Թաղի հասարակաց դերեղմանոցին մէջ:

* Շր. 13 Մայիս.— Վաղուան Աշխարհամարտն
 Կիրակիի առթիւ, կէսօրէ ևաք, Լուսարարապետ
 Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի ղրխաւորու-
 թեամբ, Միաբանութիւնը «Հրաշտախառնով մուտք
 դարձեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան Ե-
 րեկոյեան ժամերգութիւնն ու նախատանկը Ս. Լու-
 սաւորիչ Եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօ-
 բնական Սրբատեղեաց այնչաութեան հանդիսաւոր
 Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգւ. Տ.
 Յովսէփ Վրդ. Մամուր:

* Կիր. 14 Մայիս.— Աշխարհամարտն (Կանույ
 Կիրակի): Գիշերային և առաւտեան ժամերգու-
 թիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լու-
 սաւորիչ Եկեղեցիին մէջ: Ապա Քրիստոսի Ս. Գերեզ-
 մանին վրայ հանդիսաւոր Ս. Պատարազ մատուց-
 ւեցաւ: Ժամարան էր չիբարար Ս. Աթոռ դանուայ
 Ս. Էջմիածնի Միաբան Հոգւ. Տ. Նարեկ Վրդ. Ետ-
 քարեան, կարեկոպտական խոյր ի դուխ: Հոգւ.
 Հայրը բարոզեց, ընտան ունենալով «Զի ուր իցեն
 երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ևս
 ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ: 20): Բացարկեց օրուան
 տանին խորհուրդը, ըսելով թէ այսօր տանն է նաև
 Հայց. Ս. Եկեղեցւոյ հիմնարկութեան, վասնոր
 մէկ և նոյն աշխարհամատուռն — Քրիստոնէական
 Եկեղեցիին — հնադոյն անդամներէն մէկն է առ: Ս.
 Պատարազէն ևաք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայ-
 րիկ Արքեպիսկոպոս նախագահեց Ս. Գերեզմանի առ-
 կանին մէջ կատարուած «Անդաստան»ին:

* Կիր. 21 Մայիս.— Կարմիր Կիրակի: Ս. Պա-
 տարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լու-
 սաւորիչ Եկեղեցիին մէջ: Ժամարան էր Հոգւ. Տ.
 Սամուէլ Արդ. Աղոյեան:

* Կիր. 28 Մայիս.— Տօն Երեման Ս. Խաչին:
 Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ
 Սեղանին վրայ: Ժամարան էր Հոգւ. Տ. Վաղարշ
 Վրդ. Խաչատուրեան: Քարոզեց Գերշ. Տ. Շահէ
 Եպս. Անէմեան, ընտան ունենալով օրուան ծառ-
 րնթերցուածն «Յոան Եկաց Պօղոս, շարժեաց զձեռն,
 և ստէ» (Գործք, ԺԳ: 16): Առաւտեան ժամերգու-
 թեան ևաք կարդացուեցաւ Ս. Կիրեղ Երուսաղէ-
 մացի Հայրապետին Ս. Խաչի Երեման առթիւ կոս-
 տանդ Կայսեր յղած թուղթին թարգմանութիւնը:
 Իսկ Ս. Պատարազէն մաս մը և բարոզը մայ-
 նախուսեցան Յարանանի Հաշիմական Ռատիօկա-
 յանէն: Աւագ Խորանին վրայ զետեղուած էր վաս-
 կոնթիքներով դարդարուն Ս. Խաչին նշանը:

* Կիր. 4 Յունիս.— Ս. Պատարազը մատուցուե-
 ցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին
 մէջ: Ժամարան էր Հոգւ. Տ. Ներսէս Վրդ. Բա-
 ցուճեան:

* ԵՂ. Տ Յունիս.— ԼԱՄԲԱՐՉՈՒՄՆ ՏԵԱՌՆ: Եկեղեցական որևէ արարողութիւն անկարելի էգաւ հատարել, բողոքական ծանրակշիւ ղէպքերու հետ անմտութիւն:

* Կիր. 11 Յունիս.— Երկրորդ Ծաղկազարդ: Նոյնպէս կարելի չեղաւ որևէ եկեղեցական արարողութիւն կատարել:

* Շր. 17 Յունիս.— Ս. Պատարազը մատուցեցաւ ի Ս. Գլխաղիբ: Ժամարարն էր Հոգշ. Տ Ներսէս Վրդ. Բապուճեան:

— Հոգեզալուտան հանդիսաւոր նախատօնակի ի Ս. Յակոբ, նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

— Իրեկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտօնական «եկեղեցի» եւ Հսկման կարգեր: Հանդիսական էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Կիր. 18 Յունիս.— ՀՈԳԵԳԱՌՈՒՍ: Բարեկենդան եղիական Պահոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս: Ս. Պատարաղի ընթացքին կարգադրուեցաւ Ս. Յովհ. Ոսկերեանի Հոգեզալուտան ներբողը:

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ «Անդաստան» հատարուեցաւ: Հանդիսական էր Գերշ. Տ. Նորայր

Եպիսկոպոս: Իսկ արարողութեանց աւարտին կատարուեցաւ ընթերցումը Լամբրոնացիի Հոգեզալուտան ներբողին:

* Շր. 24 Յունիս.— Է. Օր Հոգեզալուտան: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գանիէլ Վրդ. Շամշեան:

* Կիր. 25 Յունիս.— Յիշատակ եղիայի մարգարէին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Ա. Քհնյ. Անդրեասեան:

— Ս. Հռիփսիմեանց նախատօնակր պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Հանդիսական էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

* Բշ. 26 Յունիս.— Ս. Կուսմանցն Հռիփսիմեանց: Առաստան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարազը մատուցուեցաւ եկեղեցիի աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գևորգ Վրդ. Նազարեան:

* Ուր. 20 Յունիս.— Նախատօնակի ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

